

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋՆ

Եվրոպական համայնքների հանձնաժողովը, այսուհետ՝ Հանձնաժողով, որը գործում է եվրոպական համայնքի համար և անունից, այսուհետ՝ Համայնք, մի կողմից,
և Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Շահառուի երկիր, որը գործում է Հայաստանի Հանրապետության համար և անունից, մյուս կողմից,
միասին, այսուհետ՝ Կողմեր, հաշվի առնելով, որ՝
Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող արտաքին աջակցություն ստացող, ինչպես նախատեսված է համապատասխան կանոնակարգերով,
աջակցությունը կարող է նպաստել Շահառուի երկրի, Հանձնաժողովի և անդամ պետությունների կողմից ստորագրված ֆինանսավորման համաձայնագրերին՝ նախատեսված գործողությունները իրականացնելու նպատակով,
Հայաստանի Հանրապետությունում գործողությունները իրականացնելու համար տեխնիկական, իրավական և վարչական շրջանակը պետք է շարադրված լինի, համաձայնում են հետևյալ մասին.

Հոդված 1. Նպատակ

1.1. Սույն Շրջանակային համաձայնագիրը փոխարինում է Հանձնաժողովի և Շահառուի երկրի միջև ստորագրված «Ֆինանսավորման հուշագրի համար կիրառելի ընդհանուր կանոններին»¹:

1.2. Սույն Շրջանակային համաձայնագիրը մանրամասնորեն շարադրում է Համայնքի կողմից ամբողջովին կամ մասամբ ֆինանսավորվող գործողությունների ներկայացման համար կիրառելի կանոններին վերաբերող դրույթները, որոնք մասնավորապես վերաբերում են արտարժույթի փոխանակմանը, հարկային և մաքսային պարտավորություններին:

1.3. Սույն Համաձայնագիրը կիրառելի է նաև Համայնքի կողմից ֆինանսավորվող այն գործողությունների նկատմամբ, որոնք իրենց բնույթով չեն կարգավորվում հատուկ ֆինանսավորման համաձայնագրով:

¹ Հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության միջև 1994թ. փետրվարի 3-ին ստորագրված «Ֆինանսավորման հուշագրերի համար կիրառելի ընդհանուր կանոններ»

Յոդված 2. Արտարժույթի փոխանակման կարգավորումները

2.1. Գործողությունների իրականացման նպատակով Շահառուի երկրի համապատասխան մարմինը /մարմինները/ պարտավորվում է /են/ տրամադրել արտարժույթ ներմուծելու և ձեռք բերելու թույլտվություն՝ առանց ընտրված երկրների միջև խտրականության:

2.2. Համապատասխան մարմինը /մարմինները/ պարտավորվում է /են/ ծրագրի ընթացքում առաքելության փորձագետներին և նրանց ընտանիքներին թույլատրել Շահառուի երկիր ներմուծել և պահել արտարժույթ:

2.3. Առաքելության փորձագետները և նրանց ընտանիքները նաև իրավունք կստանան արտահանել արտարժույթի ցանկացած չօգտագործված մնացորդը:

Յոդված 3. Հարկային և մաքսային դրույթներ

Համայնքի կողմից ամբողջովին կամ մասամբ ֆինանսավորվող գործողությունները չեն հանդիսանում հարկային և մաքսային պարտավորությունների կամ համարժեք ուժ ունեցող այլ վճարների առարկա: Մասնավորապես.

3.1. Համայնքի կողմից ֆինանսավորվող գործողությունների իրականացման նպատակով ներմուծված ցանկացած ապրանք չի կարող հանդիսանալ Շահառուի երկրի կամ նրա ցանկացած ենթակառուցվածքի կողմից կիրառվող մաքսային և ներմուծման տուրքերի, հարկերի կամ համարժեք ուժ ունեցող ցանկացած այլ վճարների առարկա:

3.2. Հանձնաժողովի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում Շահառուի երկիրը պետք է երաշխավորի, որ համապատասխան ներմուծումները կմաքսագերծվեն ժամանակին՝ մաքսային անցակետ օրինական մուտքի պահից, ստացողին առաքելու համար, ինչպես պահանջվում է պայմանագրի նորմալ իրականացման համար:

3.3. Համայնքի կողմից ֆինանսավորվող պայմանագրերը չեն կարող հանդիսանալ Շահառուի երկրում ավելացված արժեքի հարկի, ակցիզային դրոշմանիշների, զրանցման պարտավորությունների կամ համարժեք ազդեցություն ունեցող այլ վճարների կիրառման առարկա՝ անկախ այն բանից՝ այս վճարները գոյություն ունեն կամ պետք է հաստատվեն, թե պայմանագիրը կնքված է այն անձանց հետ, որոնք Շահառուի կամ որևէ այլ երկրից են:

3.4. Երբ պայմանագիրը վերաբերում է Շահառուի երկրում արտադրված ապրանքների մատակարարմանը, ապա պայմանագիրը պետք է կնքվի ապրանքների զուտ արժեքի հիման վրա՝ բացառելով ավելացված արժեքի հարկը: «Ապրանքներ» տերմինը պետք է հասկանալ որպես ցանկացած ապրանք, ծառայություն և/կամ իրավունք, որոնք նախատեսված են վաճառքի համար:

3.5. Ինչ վերաբերում է Համայնքի կողմից ֆինանսավորվող բոլոր պայմանագրերին, ապա կապալառուները և նրանց աշխատողները, բացառությամբ Շահառուի երկրի քաղաքացիների կամ մշտական ռեզիդենտների, պետք է ազատվեն Շահառուի երկրի տարածքում գանձվող բոլոր տեսակի հարկերից, տուրքերից և պարտադիր վճարներից:

ներառյալ սոցիալական ապահովության վճարներն ու պարտավորությունները և եկամտահարկը:

3.6. Անձնական և կենցաղային ապրանքները, ներառյալ սննդամթերքը, որոնք ներմուծված են Համայնքի կողմից ֆինանսավորվող պայմանագրի շրջանակներում աշխատող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման համար, ազատվում են ներմուծման պարտավորություններից, մաքսային տուրքից և Շահառուի երկրի կողմից կիրառվող՝ համարժեք ուժ ունեցող այլ վճարներից: Այս դրույթը չի կիրառվում Շահառուի երկրի քաղաքացիների կամ մշտական ռեզիդենտների նկատմամբ:

3.7. Յուրաքանչյուր ընտանիքի համար թույլատրվում է Շահառուի երկիր ներմուծել հարկային և մաքսային պարտավորություններից ազատված ընդամենը մեկ ավտոմեքենա՝ պայմանով, որ այն կօգտագործվի միայն համապատասխան պայմանագրի գործողության ժամանակահատվածում և կվերարտահանվի այդ ժամանակահատվածի ավարտից հետո: Փորձագետները և նրանց ընտանիքների անդամները կարող են ձեռք բերել վարորդական իրավունքներ իրենց առկա վարորդական իրավունքների հիման վրա:

3.8. Համայնքի կողմից տրամադրվող արտաքին աջակցությունը կարող է կասեցվել այն դեպքում, եթե 3-րդ հոդվածի դրույթները չպահպանվեն Շահառուի երկրի կողմից:

Հոդված 4. Կողմերի միջև համագործակցություն

4.1. Շահառուի երկիրը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները սույն Շրջանակային համաձայնագրի պատշաճ իրականացումն ապահովելու համար:

4.2. Շահառուի երկիրը պետք է Հանձնաժողովին տրամադրի սույն Շրջանակային համաձայնագրի կիրառմանը վերաբերող ամբողջ տեղեկատվությունը:

Հոդված 5. Վեճեր

5.1. Սույն Շրջանակային համաձայնագրի իրականացման և մեկնաբանման հետ կապված ցանկացած վեճ Կողմերի միջև կկարգավորվի բանակցությունների միջոցով, ինչն էլ անհրաժեշտության դեպքում կբերի Շրջանակային համաձայնագրում գրավոր փոփոխության:

5.2. Սույն Շրջանակային համաձայնագրի իրականացման ընթացքում Կողմերի միջև ծագած ցանկացած վեճ, որը չի կարգավորվում ողջամիտ ժամանակահատվածում Կողմերի միջև խորհրդակցությունների միջոցով, կարող է կարգավորվել միջնորդ դատարանի միջոցով, համաձայն Մշտական միջնորդ դատարանի արբիտրաժային լրացուցիչ կանոնների, ներառելով միջազգային կազմակերպությունները և պետությունները:

Հոդված 6. Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, կասեցումը և ավարտը

6.1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Շահառուի երկրի կողմից ներպետական ընթացակարգերը ավարտելու մասին հաստատող վերջին ծանուցումը փոխանակելու օրվանից:

6.2. Եթե սույն Շրջանակային համաձայնագրով սահմանված պարտավորությունները չկատարվեն համապատասխան մարմինների կողմից, և եթե նրանք ուղղիչ միջոցառումներ չձեռնարկեն ճիշտ ժամանակին, ապա Հանձնաժողովը կարող է կասեցնել ֆինանսավորման համաձայնագրի իրականացումը:

6.3. Խորհրդակցություններին համաձայն՝ Կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանիորեն չեղյալ համարել սույն Շրջանակային համաձայնագիրը՝ այդ մասին 6 ամիս առաջ նախապես ծանուցելով մյուս Կողմին:

6.4. Սույն Շրջանակային Համաձայնագրի դադարեցման կամ կասեցման դեպքում սույն Շրջանակային համաձայնագիրը կշարունակի կիրառվել նրա ներքո ստորագրված հատուկ ֆինանսավորման համաձայնագրերից բխող ընթացիկ պարտավորությունների նկատմամբ:

Հոդված 7. Փոփոխություններ

Սույն Շրջանակային համաձայնագրի ցանկացած փոփոխություն պետք է կատարվի գրավոր և հանդիսանա Կողմերի միջև նամակների փոխանակման առարկա:

Սույն Շրջանակային համաձայնագիրը կատարված է երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ անգլերեն և հայերեն: Մեկնաբանության ժամանակ տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Կազմված է Բրյուսելում՝ 07.02.2006 թվականին:

Հանձնաժողովի կողմից՝

Ժրն Ռիչարդ Վեբեր
Եվրոպական հանձնաժողով
Եվրոպայի օգնություն համագործակցության
գրասենյակի տնօրեն

Շահառուի երկրի կողմից՝

Պրն Վարդան Խաչատրյան
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
ՏԱՍԻՍ ազգային համակարգող
ՀՀ Կառավարություն

03/04/2006